

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՎԱՆՅԱԻ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 03.11.1965

Ծննդավայր՝ ՀՀ, քաղաք Երևան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Արմենուհի Վանյայի Ղամբարյանը** ավարտել է Երևանի Ն.Վ. Գոգոլի անվան միջնակարգ դպրոցը, 1984-1989 թթ. սովորել է Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտում՝ պատմա-անգլիական ֆակուլտետ:

1993–1996 թվականներին եղել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտ:

2000 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայկական հարցը 1912-1914 թթ. և Մեծ Բրիտանիան» թեմայով (գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ.Ա.Գալոյան):

2010 թվականին ստացել է դոցենտի գիտական կոչում:

1996 թվականից աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում՝ ավագ լաբորանտից հասնելով ավագ գիտաշխատողի պաշտոնի:

1989 թվականից մինչ օրս՝ գիտական աշխատանքի հետ մեկտեղ ծավալում է մանկավարժական ու դասախոսական աշխատանք:

1989-1994 թթ. աշխատել է Երևանի թիվ 122 միջնակարգ դպրոցում որպես պատմության և անգլերեն լեզվի ուսուցիչ:

1992 թ-ից -2013 թ. դասախոսել է Հայաստանի Հանրապետության տարբեր ԲՈՒՀ-ում՝ «Դավիթ Անհաղթ» հումանիտար համալսարան, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական և Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարաններ:
2003 թ-ից սկսել է աշխատանքային գործունեությունը ԵՊԲՀ-ում՝ հասարակական գիտությունների ամբիոնում որպես «Հայոց պատմություն» առարկայի դասախոս: Դասախոսություններ է կարդացել և վարել գործնական պարապմունքներ օտար լեզուներով՝ անգլերեն և ռուսերեն: 2006 թ. նոյեմբերից – 2013թ. հունիս՝ ԵՊԲՀ-ում Պատմության ամբիոնի ստեղծման օրից մինչև վերջինիս լուծարումը, ղեկավարել է ամբիոնի աշխատանքները ամբիոնի վարիչի պաշտոնում: 2013թ. հունիսից - առ այսօր շարունակում է դասավանդել ԵՊԲՀ-ում որպես հասարակական գիտությունների ամբիոնի դոցենտ:

Գիտական հետաքրքրությունները ներառում են Հայոց պատմության նոր շրջանի՝ Հայկական հարցի և Հայաստանի առաջին հանրապետություն, վերջիններիս հանդեպ ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի քաղաքականության վերաբերյալ հիմնահարցերը:

Հեղինակ է 2 մենագրության, 4 գիտամեթոդական աշխատանքների, ավելի քան 60 գիտական հոդվածների՝ տպագրված հանրապետական և արտասահմանյան հեղինակավոր, այդ թվում՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (ՄԳՇ) ընդգրկված ամսագրերում:

«Հայոց պատմություն» ակադեմիական քառահատորյակի III հատորի երկրորդ գրքի համահեղինակ է:

Մասնակցել է բազմաթիվ՝ միջազգային և հանրապետական գիտաժողովների, երիտասարդ պատմաբանների միջազգային դպրոցների և սեմինարների աշխատանքներին (Մոսկվա, Գոլիցինո, Երուսաղեմ, Բուխարեստ, Բեյրութ, Երևան): Տարիներ շարունակ գիտական զեկուցումներով, հանրային դասախոսություններով ու ելույթներով հանդես եկել Հայկական բանակի զորամասերում, «Ազդակ»(Պեյրութ) օրաթերթի առցանց լսարանի համար, ՀՀ պետական ռադիոյի հարթակում:

Գիտական, կրթա-լուսավորչական և դաստիարակչական գործունեության համար արժանացել է մի շարք գովեստագրերի և պատվոգրերի:

Պարգևատրվել է .

- 2010թ. հոկտեմերի 15-ին Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հոբելյանական «Արծաթե կրցքանշան»-ով,
- 2011թ. դեկտեմբերի 24-ին «ՀՀ զինված ուժեր 20 տարի» հոբելյանական մեդալով՝ «Պատմության և մշակույթի էջեր» ծրագրին ակտիվ մասնակցության, բանակ-հասարակություն կապի ամրապնդման և զինծառայողների հայրենասիրական դաստիարակության գործում ունեցած ներդրման համար,
- 2013թ. հունվարի 28-ին «Զինվորի պաշտպան» մեդալով ՝ ՀՀ բանակի զինծառայողների ռազմահայրենասիրոկան դաստիարակության գործում ներդրում կատարելու համար,
- 2015թ. ապրիլի 24-ի՝ «Юбилейной медалью в память 100-летия Геноцида армян»,
- 2018թ. հունիսի 2-ին «Վաչագան բարեպաշտ» մեդալով՝ Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի զինծառայողների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ներդրված նշանակալի ավանդի համար: